

## ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

## ՄԵՐ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՑԸ

Հունվարի 29-ն է, մեր ժողովրդի ամենանիշտական օրերից մեկը, Մեսրոպ Մաշտոցի տոնը:

Ս. Էջմիածնի միաբանությունը մեկնում է Օշական Սուրբի տոնը կատարելու:

Ամենանիշտական և սրբազն ուստափայրը հայ Համբատացյալ ժողովրդի Մաշտոցի գամբարանն է:

Դարերի ընթացքում այն սրբագործվել է Հայ ժողովրդի սիրով, Համբատով և Մաշտոցի գործի Հաղթանակներով:

Եվ առաջ մեր ավտոն արանում է դեպի Օշական: Ճանապարհին ուրախ բացական-չություններով մեզ ողջունում են Համբատացյալ գյուղացիները ու գեղջկուհիները:

Մենք մոտենում ենք Օշականին... Արագածի սրբազն լանջերից, ժամանակի հավերժածութիւնը երգերի միջից իր լուսապայծառ կերպարով, իր զոր փառքով և իր անպատճելի վեհությամբ բարձրանում է Հայ ժողովրդի հանճարեղ դավակը:

Թվում է, թե նա կենդանի է և կանդնած սարի գաղաթթին, Հայացքը Մասսին ուղած, գրիչը մեկնած Հայ ժողովրդին, ինչպէս մտքի ամենի բահաւարելի դորություն և հոգու անընդուրելի մեծութիւն, թարթում է իր զավակներին, կանչում, կանչում բոլորին, թե մեծին, թե փոքրին:

Եվ առաջ նրա շուրջը բարձրանում են ժագաղաթի բուրդերը և գրիչների խրձիկները դիմումները:

Ու գալիս է Հայ ժողովուրդը ամեն կողմից, գալիս են մեծերն ու փոքրերը, երևանարդներն ու ծերունիները, պատանիներն ու ժանուկները և միլիոնավոր ճեռ-

քերի վրայով բարձրանում է դեպի վեր մեր փառքը, մեր սրբություն արբոցը, Մեսրոպ Մաշտոցը:

— Լուռ և ուշադիր...—շնչում է մեղանից ամեն մեկը.—զինվիր այս սուրբ ովելությամբ, այս նվիրական զգացումների լությամբ և թող սիրող ճախրի մեծագույն հանճարի մեծագործ վճռականությամբ ու փառքով:

Այս, այսպես է նա. այսպես է ապրել և մոտածել դարեր շարունակ ու ոչ մի վիշտ, ոչ մի աղետ, որքան էլ այն լինի հուսահատական ու ներծործոն, չի կարողացել Հայ մարդուն մոռացնել տալ այս վեհագույնը:

Այսպես է եղել Մաշտոցը, այսպես էլ կմնա:

Անցնում ենք Օշականի ձորը, որ Արարատյան լաշտի վերջին եղբերը բաժանում է Արագածի ստորոտներից:

Զորի միջով ուրախ կարկաչներով Հռ. սում է գետը, որն իր ալիքների շրայլ համբույրներով զարդարում է Արագածի հպարտատեսք լանջերը:

— Ահա Խորենացին, —բացականչում է ուղելիուներից մեկը, —առա այն ջրաղացը, ուր պատսպարմել է Հայ պատմագրության մեծասիրտ քերթողահայրը, որը իրեն հետապնդող խավարամիտ տարրերի զենքից աղատվելու համար հաղել է ջրաղացպանի ալլաթաթախ քուրձերը:

Բոլորիս Հայացքները միանում են և մեկ աչք դարձած բեկնեռում ջրաղացին: Երեկում են միայն լաստահիմ պատերի միացորդները:

Խորենացի... Մեսրոպի լավագույն ա-  
շակերտներից մեկը. իսկ Եղիշեն, Կորյունը  
Եղիկը, Փարագեցին, առա նրա գործի կեն-  
դանի վկաները: Սիրտդ ճղփում է ուրա-  
խությունից:

Ավտոն Հազիվ հաղ չնչելով համբաքայլ  
մեկ աջ և մեկ ձախ վնչացնելով և երեխն  
երբեմն ծուխի բարակ քուլաներ բաց թող-  
նելով բարձրանում է սարն ի վեր... Մանր  
են մեր քայլերն ու շարժումները, արդ  
բնական է և հոգեբանական, մենք մատե-  
նում ենք սրբազնաշիրթիմն:

Քարափի կատարին, որպես նրա ընա-  
կան շարունակություն բարձրանում է դյու-  
ղի դպրոցի երկնարկանի փառահեղ շեն-  
քը... պատուհաններից կախ ընկած դեմ-  
քերը դիմք են ու խնդուն, լամում են  
նրանց երդերը: Օդը առավել դուրեկան  
ու քաղցր է դառնում:

Ի՞նչ պատմական դուրադիպություն՝  
Մեսրոպ Մաշոց, Խորենացի և նոր սե-  
րունդ: Երեք փառք, երեք կոթող կողք  
կողքի... Ո՞րքան հրապուրիչ է, ո՞րքան  
դեղեցիկ:

Եւ ահա սարի կատարին կանդնած է  
նա, Հայ հանճարը, ժամանակի պես իմաս-  
տուն, պատմության պես անխորտակելի և  
ճշմարտության պես արզար.... կանդնած է  
նա հպարտ ու վես, իր դրչյա սուրը մեկ-  
նած դարերի փոթորիկներին ու արհամիկնե-  
րին, կանդնած է նա զիմարթագեմ և ու-  
րախ, իր համատով ու ողեվորությամբ,  
կանդնած է մեր սրբություն սրբոցը՝ Մե-  
րոպ Մաշոցը:

Ո՞րքան մրրիկներ են անցել Արագածի  
լինմ կատարներով, ո՞րքան կայծակներ են  
Խայթքել նրա սրբազն լանջերին, և ո՞ր-  
քան արյունախում հորդաներ Շապուհների  
ու Հազկերտների, Բուղաների ու Լենկթե-  
րուրների, Շահարանների ու առվթանների  
լարնվել են մեսրոպյան դենքին և փշրմել,  
իոշիացել և արյունաքամ, կորաքամակ ու  
ամոթապարտ Հազիվ հաղ կարողացել են  
ճողովրել մեսրոպյան դենքի մահաբեր  
արփածներից:

Գիտնականներն ու իմաստունները չեն,

որ պիտի փառարաննեն նրան, բանաստեղծ-  
ներն ու վիպերգողները չեն, որ պիտի  
դրվագնեն նրա զործն ու փառքը և ոչ էլ  
մարդկային լիզուն և զգայմունքը. ոչ,  
պատմությունն է նրա փառարանիչը, ժա-  
մանակն է նրան մեկնարանողը և հավեր-  
ժությունն է նրա բացահայտիչը: Եվ նա  
միացած է պատմության, ժամանակի և  
հավերժության հետ, իսկ այս բոլորի կեն-  
դանի ապացույցը՝ Հայ ժողովուրդն է:

Սկսվում է պատարագը, սակայն հա-  
վատացյալ զանգվածները պատարագի հա-  
մար չեն, որ խոնվել են այստեղ: Նրանք  
եկել են սրբազն շիրիմը համբուրելու, ե-  
կել են նվիրվածությամբ, մե երկյուղով և  
հալատով: Եւ մարդիկ իրար ճգմելով ու  
տրոքելով խուժում են գեղվի դամբարանը.

Հերթի կանդնածների շարքերը քանի  
զնում ստվարանում են: Վառելով մոմերը  
և ծնկաչոք գամելելով դամբարանին նրան-  
ցից և ոչ մեկը հանձն չի առնում հոժա-  
րությամբ բաժանվել նրանից:

Դամբարանից հաղիվ հաղ դուրս պոկ-  
վողների դեմքերը արտասովոր կերպով  
փայլում են, նրանց աչքերում նկատելի է  
ինչ որ բոց ու կայծ և նրանք շնչում են  
«Փառք քեզ տեր, հազար բերան փառք»:

Հետզետե ածող բազմության մըր-  
մունչները դադարում են, երբ սեղանից  
հնչում է պատարագիչ քահանայի քարոզը:

Նա հակիբը նկարագրում է Մեսրո-  
պյան դարաշրջանում հայ ժողովրդի գո-  
յությանը սպանացող վտանգները, երբ  
դաժան տիրողները վճռել էին Հրի ու սրի  
միջոցով բնաջնջել հայ ժողովրդին և վե-  
րացնել նրան: Նա պատմում է գրերի գյու-  
տի քաղաքական նշանակությունը, շեշտե-  
լով, որ այն ոչ միայն գենք հանգիսացավ  
քրիստոնեությունը արմատավորելու և ու-  
կեղարի մատենագրությունը ստեղծելու,  
ոյլ և հղոր զենքերից մեկը դարձավ հայ  
ժողովրդի Փիղիկական գոյությունը պա-  
հելու և պաշտպանելու այն բոլոր սոսկա-  
ի արհամիկներից ու փոթորիկներից, ո-

րոնք հետագա դարերում ժայթքեցին Հայ օրվա լուսապայծառ կյանքին, Հայ պետականության:

— Մեսրոպյան զենքը՝ գրերի գյուղը  
յեզ տվեց արմեսու ու գրականություն;  
Ճարտարապետություն և լեզու, կուլտու-  
րա և քաղաքականություն—բացականչում  
է քարոզիչը, այն մեզ հասցրեց մեր այս-

օրվա լուսապայծառ կյանքին, Հայ պետա-

կանության:

Պատարադն ավարտվում է:


Մենք հրաժեշտ ենք տալիս Օշակա-  
նին... Իսկ նա հավերժության հետ կանդ-  
նած է սարի կատարին, հայացը Մասսին  
հառած ու գրեչը ժողովրդին մեկնած...

ՈՒԽԻԹԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

29-6-44 թ.

Օշական





ՊԵՏՈՒԹԱՆԻ ՏԱՂԱՎՈՐԸ